ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար թթվածնային կայանի համար պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԳՀԱՊՁԲ-2018/1-ԵՊԲՀ>> ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մարտի 30-ին կնքված N <<ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ>> պայմանագրում 2018 թվականի ապրիլի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: 30.03.2018թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ» գնման պայմանագրի 8.6 կետ:

Փոփոխության նկարագրություն: Մատակարարման ժամկետի երկարացում:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
30.03.2018թ. ԿՆՔՎԱԾ N «ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «26» « 06 » 2018թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (Այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ար.Մեդտոխնիկա» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն՝ Վ.Թորոսյանի (Այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 30.03.2018թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ» գնման պայմանագրի (Այսուհետև՝ Պայմանագիր) 8.6-րդ կետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին N «ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ» գնման պայմանագրի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է N «ԳՀԱՊՁԲ-2018/1-1-ԵՊԲՀ» գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը, մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 1 (մեկ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2	ՀՀ, ք.Երևան, Զաքյան 8
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
հ/հ 11500166513800	Հ/Հ 1930041595160100
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 02604367
	էլ. հասցեն՝ armedtechnicallc@gmail.com
	Հեռ. (010) 58 57 63
Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան	Տնօրեն Վ.Թորոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ